



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Ա. Ֆ. Ա. Հ. -ի Ժ. Կ. Ա. -ի Կ Ի Ց Մ Թ Ե Ր Մ Ա Հ
Կ Ո Ս Ւ Տ Տ Ե

ԱՆԴՐԿՈՎԿԱՆԻ
ՎԱՅՐԻԱՀ ՊՏՈՒՂՆԵՐԸ

9-185

հ. թ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՆԻ ԿՈԽՎԵՆՔՐՈՒՐՈՅԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ—1935 թ.



Ա. Ա. Ֆ. Խ. Հ.-ի Ժ. Կ. Խ.-ին ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

Ա. Մ. ԳՈՆՉԱՐՈՎ, յեվ Վ. Ն. ՏՈՒՆԵՎ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՆՎԵՆՍԲՐՅՈՒՐՈՅԻ ՀՐԱՄԱՐԱԼՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ--1935 թ.

Պատասխ. խմբ. Ա. ՎԱՆՑՑԱՆ
Տեխ. խմբ. Ի. Ի. ՏՐՈՒՖԱՆՅԱՎ.
Քաղաք. Ա. ՄԱՆՈՒԿՈՂԼՅԱՆ

Տպարան «Տեխնիկա» կեցնողելի գ. հ. 5.

Պատվեր 1096.

Գլաւլիստ հ. Ա. 1347

Տիրաժ 2150

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Շնորհիվ Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության մեջ ձեռք բերած հսկայական հաջողությունների, տարեցարի լավանում և ԽՍՀՄ-ի աշխատավորների նյութական բարեկեցությունը։ Քաղաքի և գյուղի աշխատավորների մատակարարան գործի լավացման, յերկրորդ հնդամյակի ընթացքում սպառզական չափերն ավելացնելու խնդիրը, վորը դրված եր XVII կուսհամագումարում՝ յերկրորդ հնդամյակի ժողովրդական տնտեսության այլ խնդիրների շարքում, պահանջում և այն իրականացնելու համար յերկրի ուժերի մոբիլիզացիա։

Այդ խնդիրների լուծման գործում, մեծ դերը պատկանում է ապրանքաշրջանառությանը, վորի զարգացումն ու լայնացումը հանդիսանում և աշխատավորների նյութական բարեկեցության պայմաններից մեկը։ Վերջին տարիներս, ապրանքաշրջանառության ընագավառում շատ բան և արված. լայն կերպով զարգացրած և պետական, կոռուպտատիվային և կոլխոզային առևտուրը, բայց սւխալ կլիներ մտածել թե խորհրդային առևտուրի այդ ամբողջ յեռուղերը բավական ե, վորպեսզի մեր տնտեսության ամբողջ պահանջը բավարարի, Ընդհակառակը, այժմ, ավելի քան յերբեքը պարզ և դառնում, վոր ապրանքաշրջանառության ներկա դրությունը չի կարող բավարարել մեր պահանջները։

Դրա համար եւ, խնդիրը կայանում և նրանում, վորպեսդի ավելի ևս զարգացվի խորհրդային առևտուրը, պետք և ներկրավել նրա մեջ տեղական (արդյունաբերությունը) ուժեղացնել կոլխոզգյուղացիական առևտուրը և խորհրդային առևտուրի բարձրացման բնագավառում նոր վճռական հաջողություններ ձեռք բերել։ (Ստալին ՀԿ (բ) և XVII կուսհամագումարում արած հաշվետու զեկումից։ Անդրպետհրատ—1934 թ. 19—80 յերես)։

Գյուղի և քաղաքի մեջ ապրանքաշրջանառության զարգացման բնագավառում մեծ նշանակություն ունի կոլխոզային առետուրը և ապակենտրոն մթերություն ունի ճիշտ կազմակերպումը: Ճիշտ կերպով կազմակերպած ապակենտրոն մթերություն խթանում էն դյուղական տնտեսության զարդացմանը, նույնպես և լավացնում են բանվորական մատակարարման գործը գյուղից ապրանքային ավելցուկները քաղաք տեղափոխելու միջոցով:

1934 թվի գյուղատնտեսական արտադրանքի ապակենտրոն մթերություն աշխատանքների հանրագումարները ցույց են տալիս, վոր բանվորական մատակարարման մեջ ապակենտրոն մթերությունները նշանակալից տեղ են բռնել: Բանվորական ընդհանուր մատակարարման մեջ ապակենտրոն կարգով մթերած գյուղատընտեսական ապրանքների տեսակարար կշիռը կազմում է. Ազնեվթի գծով՝ 50% , Անդրյաբկաթ. բանվ. մատ. բաժնի գծով՝ 70% , Լենտեկսախիլի գծով՝ 80% և այլն: Անդրկովկասում ապակենտրոն մթերման մեջ մեծ տեղ են բռնում պառուղներն ու հատապտուղները, վորոնց վերաբերմամբ բնակչությունը միշտ ել ունեցել է ուժեղ պահանջ: ԽՍՀՄ-ի աշխատավորության կողմից պտուղներ և հատապտուղներ գործածելու պահանջը յուրաքանչյուր տարի աճում է: Ամենաթանկագին պտուղները (կիտրոն, նարինջ, մանդարին, խաղող, դեղձ և այլն) հանդիսանում են ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորների սեփականությունը, բաժինը, այնինչ կապիտալիստական յերկրներում այդ պտուղների գործածությունը չափազանց անհամաշափ է. ապահովված դասակարգերը նրանցից ունեն առատությամբ, իսկ պրոլետարական մասսային նրանք քիչ են մատչելի:

Բերքատվության բարձրացման և պտղահատապտղային տընտեսությունների հողային տարածությունների ավելացման վերաբերյալ խորհրդային կոռավարության ձեռք առած միջոցառությունները պետք ե ապահովեն բնակչության կողմից տարեցտարի կուլտուրային պտուղների վերաբերյալ աճող պահանջները: Բայց անհրաժեշտ է հաշվի առնել վոր նոր այգիներն, առանձնապես այնպիսիները, վորպիսիքն են խնձորինը և տանձինը, կարող են լրիվ բերք տալ միայն $12-15$ տարեկան հասակում. դրա համար ել նոր այգիների համար հողատարածությունների ավելացման խընդրի և բերքատվության բարձրացման հետ միասին, անհրաժեշտ է հանդիսանում վորոնել այդ կարևոր մթերքներով մատակարարելու համար լրացուցիչ աղբյուրները: Նման լրացուցիչ աղբյուր

հանդիսանում են վայրիաճ պտուղներն ու հատակտուղները, վորոնցով առանձնապես հարուստ և Անդրկովկասը։ Դժբախտարար այդ գործի վրա մինչև այժմ հարկավոր ուշադրություն չեն դարձրել զուս սննդային արդյունաբերությունը, վոչ ել ուրիշ համապատասխան կազմակերպությունները։

Անդրկովկասը, զոր հանդիսանում ե պտղային ծառերի և խաղողի շատ տեսակների հայրենիքը, ԽՍՀՄ-ի Գիտության Ակադեմիայի կողմից ճանաչված և—պտղաբուծության համաշխարհային ոջախներից և վայրիաճ հումութիւն ամենահարուստ աղբյուրներից մեկը, զորն ավելի քան հետաքրքրություն և ներկայացնում ինչպես իր տեսակների բազմազանությամբ, իր վորակական հատկությամբ, այնպես ել ապրանքային հնարավոր պաշտոնով։

Բավական և նշել, զոր ամբողջ Անդրկովկասում հայտնաբերված և մինչև 70 տեսակ վայրիաճ պտուղների տեսակների գոյությունը—կտկավոր, կորիզավոր, կակալածե պտուղներով, հատապտուղային, արևադարձային և այլն։

Բնության բարենպաստ պայմանների գոյության գեպքում, շատ տեսակները տալիս են հիանալի հատկությամբ պտուղներ, վորոնջ պետքական են, ինչպես արդյունաբերական զանազան տեսակի վերամշակման, նույնպես և թարմ գրությամբ գործածելու համար։ Այսպիս որինակի համար պտղախմոր և զանազան տեսակների միջուկներ պատրաստելու համար, առանձնապես պետքական են՝ շագանակները, զկեռը, մամու տանձը (բոյարշնիկ), սերկիլիլը, տանձը, խնձորը, ալուչան, հոնը, խուրման, թարձորակ հյութեր, շարապներ (սերոպ), քամլածքներ և կերակրաներկեր կարելի յե պատրաստել՝ հոնից, դափնեկեռասից, մոշեցից, նուռից, կիտրոնից, տանձից, խնձորից, ալուչայից, տյորենից, մամու տանձից, ծորենուց, կովկասյան չերնիգայից, մուշաբաների լավ տեսակներ և գոշաբներ կարելի յե վերամշակել, պատրաստել՝ սերկիլից, հոնից, ալուչայից, տյորենից, թութից, տանձից։ Ամեն տեսակի պաստեղներ (կատ այսպես կոչված լավաշներ) ստացվում են՝ հոնից, ալուչայից, տյորենից, թութից։ Հնարավորություն և ստեղծվում բավականաչափ լայնացնել նուռից, սումախից, լիմոնից ստացվող թթվուտային արտադրությունը և խնձորից, ալուչայից ու սերկիլից—պեկտինային արտադրությունը։ Հրուշագործական արտադրության համար մեծ գործածություն կարող են ունենալ շագանակը, փշատը և այլն։

Անդրկովկասի Սննդի Արդյունաբերության Գիտական-հետազոտական Խնստիտուտի մոտավոր հաշվառմամբ, վերև թվածվայրիան պտղային հումույթի ընդհանուր արտադրանքը, չհաշված նշղարենու կակալներն և աճառները, լավ բերքի գեպքում կաղմում են մինչև 200 հազար տոնն:

Ապրանքային մասը, վորը հնարավոր և ընդգրկել մթերումների մեջ, յերկրորդ հնգամյակի ընթացքում տատանվում է 25—30% սահմաններում ընդհանուր բերքի համեմատությամբ, այսինքն, 30—100 հազար տոնն հումույթ, կախված բերքից:

Այսինչ, մթերումները բոլորովին ել չեն ընդգրկում ամբողջ ապրանքային արտադրանքը, չնայելով վերջին յերկու տարվա նրանց ուժեղ աճի, Անդրկովկասում 1932 թվին մթերքած և վայրիան պտուղներ 600 տոնն, 1933 թվին՝ 4,2 հազար տոնն, 1934 թվին 15,5 հազար տոնն:

Մթերումների այդ հետամնացությունն ապրանքային պաշարից և հումույթի նոր տեսակների աննշան յուրացումը բացատրվում և վաճառման գործի լավ չը դնելով և մթերող կազմակերպությունների թույլ աշխատանքով:

Բացի դրանից, աչքի յե ընկնում նաև վերամշակված արտադրանքի վատ հատկությունը, և չորացման թանկությունը, վորն ստացվում և տեղերում պրիմիտիվ ծխանների հետեանքով՝ Դրա համար ել, ամբողջ լրջությամբ դրվում և վայրիան պտուղների և հատապտուղների անտառային հոծություններն ավելի կուլտուրական և ուցիոնալ կերպով ոգտագործելու, այդ պտուղների ապակենտրոն մեթերման մեթոդները լավացնելու առավելագույն չափով պակասեցնելու վերադիր ծախսերը և մեքենայացրած չորանոցներ կազմակերպելու խնդիրը, լավացնել նրանց պահելն ու տեղափոխելն այնպես, վորպեսզի արդյունաբերությունն ու աշխատավորներն ստանան լավ վորակի մթերքներ:

Վայրիան պտուղների և հատապտուղների ապակենտրոն մթերումների հաջողությունը կախված է դեպի այդ գործն ունեցած, ինչպես մթերող կազմակերպությունների, նույնպես և կոլխոզնիկների և մենատնտես գյուղացիների վերաբերմունքից:

Անպայման այդ գործին պետք ե աջակցեն կուսակցական (և առանձնապես կոմյերիտական և պիոներական) կազմակերպությունները տեղերում, վորոնք պետք ե հաշվի առնեն տվյալ ետապում, կուտարական պտուղների շարքին վայրիան պտուղների և հատապտուղների մթերումների ամբողջ քաղաքական

կարեսությունը, և միջոցներ ձեռք առնեն, վորպեսղի տեղական բնակչությունն առաջուց իմանա նրա մասին, թե ինչժամ վայրիան պտուղները հենց հիմա յեն հարկավոր մեր պետությանը և նըս-րանց մթերումներն ինչպես կազմակերպել կանոնավոր կերպով:

Անդրկովկասի կոնվենցիոնուրոն հրատարակում և գյուղացիների և մթերման ստորին ողակների համար հանրամատչելի գրքույկներ այն մասին, թե վեր վայրիան պտուղները պիտի հավաքել և ինչպես հավաքել, պահել և տեղափոխել նրանց, վորպեսղի տեղ հասցրվեն մինչ-արտադրական վերամշակման վորպես բարձ վորակի հումույթ կամ թե հասցրվեն թարմ դրությամբ շուկա՝ անմիջապես սպառողին:

Այդ գրքույկներն, ի հարկե, բոլորովին չեն սպառում վայրիան պտուղների մթերումները կանոնավոր կազմակերպելու և նրանց վերամշակելու վերաբերյալ բոլոր հարցերը, բայց նրանք դյուղացիների և մթերման ստորին ողակների համար հանդիսանում են բավականաչափ աղբյուր մինիմալ գիտելիքներ ձեռքբերելու համար, վորոնք անհրաժեշտ են Անդրկովկասի պայմաններում այդ գործը կանոնավոր կազմակերպելու դեպքում:

Ա. Վանցյան.

Սույն բրոշյուրը գրված և Անդրկովկասյան Մննդի Արդյունաբերության Գիտական-հետազոտական Ինստիտուտի նյութերի (ձեռագրերի) հիման վրա. գրանցից անհրաժեշտ ե ցույց տալ հետեւյալ հիմնականները:

1) Պրոֆեսոր Պ. Զ. Վինոգրադով-Նիկիտին և անտառաբուծության Պ. Շուտով «Աղբբեջանի-Բելքանի, Զաքաթալայի, Կախի շրջանների վայրիաճ պտղային բազաների հետազոտության հաշվետվությունը».—1932-33 թ.

2) Ղարաքիլիսայի անտառափորձնական կայանի ղիբեկտոր Գ. Յարոշենկո և անտառաբուծ Լ. Մախատաձե. «ՀՍԽՀ—Ալանի վերդու շրջանի վայրիաճ պտղային բազայի հետազոտության հաշվետվությունը».—1932-33 թ.

3) Վ. Ն. Տունե «Անդրկովկասի անտառները վորպես մննդի արդյունաբերության հումուրթային բազա».—1932-34 թ.

4) Գ. Ի. Բագինով և Պ. Շուտով. «ԱՍՖԽՀ-ի Նուխու, Վարդաշենի, Կուտկաշենի շրջանների վայրիաճ պտղային բազաների հետազոտության հաշվետվությունը».—1933-34 թ.

5) Ս. Շումսկի «ԱՍՖԽՀ-ի Զաքաթալայի և Նուխու հոծությունների վայրիաճ պտղուղների քիմիա-տեխնոլոգիական հետազոտությունը».—1932-34 թ.

6) Ե. Շմիդի, «ԱՍՖԽՀ-ի Մասսալինսկու, Լենքորանի և Աստարայի շրջանների վայրիաճ պտղային բազաների հետազոտության հաշվետվությունը».—1933-34 թ.

7) Գ. Ավրուտին. «Լենքորանի հոծության քիմիկո-տեխնոլոգիական հետազոտությունը».—1933-34 թ.

I. Վայրիան պտուղների նշանակությունը ժողովրդական սեռների համար

XVII Կուսամագումարում բոլորովին կոնկրետ կերպով տրված եր այն դրույքը, վոր «մթերքների գործածության չափը յերկրորդ հնգամյակի վերջում պետք ե ավելացած լինի 1—3 անգամ»:

Պտուղներն ու հատապտուղները հանդիսանում են մարդու սնունդի ամենարժեքավոր բաղկացուցիչ մասը: Նրանք պարունակում են իրենց մեջ այն հիմնական սննդարար նյութերը, վորոնք անհրաժեշտ են մարդու որգանիզմը պահելու և կենսունակությունը զարգացնելու համար (սպիտակուցներ, ճարպեր և այլն, առանձնապես վիտամիններ), լավացնում են մարտզությունը, նպաստում նյութերի փոխանակմանը և աջակցում մեր մարմնի ընդհանուր առողջացմանը, Այս ժամանակ, յերբ մսեղեն և ձկնեղեն կերակուրները շարունակ և անշափ գործածելուց կարող են առաջ բերել հիվանդություններ և որգանիզմի քայլքայում, բուսական կերակուրն ընդհանրապես, պտուղներն ու հատապտուղները մասնավորապես, մարդու համար առաջացնում են առողջություն, նրա որգանիզմին տալիս են աշխատունակություն և դիմացկանություն:

Պտուղների և հատապտուղների այդպիսի բարենպաստ աղդեցությունը մարդու որգանիզմի վրա, նրանց վերաբերմամբ ուժեղ պահանջ ե առաջ բերում:

Ֆրանսիայում, որինակ, մրգի գործածությունը մի մարդուն տարեկան հասնում է 113 կիլոգրամ, Հյուսիսային Ամերիկայում—80—90 կիլոգրամ, Գերմանիայում—77 կլգ., իսկ ԽՍՀՄ-ում (1930 թ.) ընդհամենը միայն 18 կիլոգրամ (միջին թվով): Մրգերի գործածության այլքան ցածր չափը Խորհրդային Միության մեջ հանդիսանում է հին կարգերի ժառանգություն, յերբ աշխատավո-

ըության կանոնավոր սնունդի վրա վոչ մի ուշադրություն չեր դարձվում և այգեգործական կուտարաներն ընդհանրապես չելին խրախուսվում:

Այժմ, ԽՍՀՄ-ում այնպիսի թանկարժեք պտուղներն, ինչպիսիքն են՝ կիտրոնը, նարինջը, մանդարինը, խաղողը, գեղձը և այլն, հանդիսանում են բոլոր աշխատավորների սեփականությունը, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում:

II. Վայրիան պտուղների յեզ հատապտուղների ընդհանուր բնութագիրը

Առաջին հնդամյակն իրազործելուց հետո, աշխատավորների կենսական մակարդակն այնքան և բարձրացել վոր գոյություն ունեցող այգիների արտադրանքը չի կարող այլև բավարարել պտուղների և հատապտուղների վերաբերյալ աշխատավորության առաջազրած պահանջը:

Պտղային և հատապտղային տնտեսությունների հողամասերի լայնացման վերաբերյալ խորհրդային իշխանության ձեռք առած միջոցառումները առայժմ չեն կարող տալ անհրաժեշտ քանակությամբ մրգեր, նրա համար, վոր նոր տնկարանները պահանջում են խոշոր դրամամուծումներ և շտապ կերպով չեն կարող տալ բերք նոր այգիներից այնպիսի տեսակները, ինչպիսիքն են՝ խնձորենին, տանձենին, շաղանակը, վորոնք լրիվ բերք կտան միայն 10-20 տարեկան հասակում. իսկ այս հանդամանքը, ինարկե, մեծ արգելք և հանդիսանում աշխատավորությանը պտուղների և հատապտուղների մասակարարման նորման շտապ կերպով ավելացնելու խնդրի լուծմանը:

Այդ հարցը կարող է լուծվել վայրիաճ պտուղների և հատապտուղների մթերումների մեծ չափով ուժեղացումով, վորոնցով առանձնապես հարուստ և Անդրկովկասը:

Մարդու ձեռքով մշակված կուտարային բոլոր բույսերն ել ունեն իրենց վայրի նախորդները, վորոնցից առաջ են յեկել նրանք, Դա վերաբերում է և թփերին և պտղատու ծառերին. տանձենին, խնձորենին, սալորենին, մոշը, մորին և բոլոր տեսակի կուտարային պտուղների և հատապտուղների տեսակները առաջացել են իրենց համապատասխան վայրի ծառերի և թփերի ցեղակիցներից, վորոնք մեծ քանակությամբ գոյություն ունեն Անդրկովկասի անտառներում.

Աղբը եղանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների հողակլիմայական պայմաններն անարվոր կերպով քարենպաստ են նման բազմազան բուսականության աճեցման համար, Անտառները, վորոնցով ծածկված են Անդրկովկասի հովիտներն ու լեռնային թերքվածքները, ընկած են ամենատարբեր կլիմաների մեջ՝ սկսած մերձարևադաշտինից մինչև մերձալպիականը: Դրա շնորհիվ ել Անդրկովկասի անտառներում աճում են հարավային պտղատու բույսեր՝ խուրմա, նուռ, պիտակ, նուշ, շագանակ, հունական կաղին, լատենի (կարկաս) և ցուրտ կլիմայի բույսեր—ծառեր ու թփեր (հապալասի—չեռնիդա և այլն): Առանձնապես շատ կան վայրիաճ պտղատու ծառեր (տանձենի, խնձորենի, զկեռ, հոն, ալուչա և ուրիշները):

Այդ բոլոր տեսակները շատ հաճախ տալիս են հրաշալի բերք, վորը մեծ հաջողությամբ կարելի յե հավաքել և ոգտագործել աշխատավորների պտղային անունով լավացնելու և նորման ավելացնելու համար: Դրա հետ պետք է նկատել վոր կուլտուրային բույսերի ընդհանուր բերքաքանակը միջին բերքի ժամանակ Անդրկովկասում հաշվվում է մոտավորապես 300 հազար տոնն, իսկ վայրիաճներինը, ի նկատի չառնեղով նույն իսկ վայրի կաղնին և հաճարի կաղնին, հավասար է 200 հազար տոննի (բերքատու տարին):

Իրենց համի վորակով և աննդարարության հատկությամբ վայրիաճ պտուղներից մի քանիսը շատ քիչ են զիջում կուլտուրային պտուղներին և հատապտուղներին: Այնուամենայնիվ, շագանակի, խուրմայի, հոնի, ալուչայի, տանձի և մորու շատ վայրի տեսակների մեջ բավականին շատ բարձր վորակ ունեցողներ են հանդիպում:

Նրանք հիանալի նյութ են տալիս մուրաբա պատրաստելու համար—(հոնը, մոշը, մորին, ալուչան), պյուրե, խմոր—(խնձորը, տանձը, զկեռը, ցուպտկին, ալուչան), պաստեղներ—(ալուչան, հոնը) և վերջապես չոր մրգեր—(տանձը, խնձորը, հոնը և ուրիշները): Վերոհիշյալ բոլոր պտուղներն ու հատապտուղները գործ են ածվում նաև թարմ դրությամբ:

Այդ մթերքներով Խորհրդային Միության խոշորագույն արդյունաբերական կենտրոններին, Կարմիր Բանակին, Փարբեկախոհանոցներին, դաշտային հետախուզողներին և այլ հետազոտական խմբերին մատակարարելն առանձնապես շատ կարևոր նշանակություն ունի, և վերջապես ծայրահեղ հյուսիս ուղար-

կելու համար շատ կարևոր են, վորովհետև այնտեղ առանց առաստանի բանական գարեղեն սնունդի զարգանում են այնպիսի հիմքանդություններ, ինչպեսին ե լոդախտը:

Այդպիսով, վորտեղ պտուղների և հատապտուղների մատակարարումը վերամշակված ձևով կրում ե մասայական բնույթը և վորտեղ դրա հետ միասին պահանջվում ե լավ վորակի և աժանագին մթերք, այնտեղ վայրիաճներն ոգտագործելը հանդիսանում ե շատ ցանկալի և անփոխարինելի:

Խորհրդային կառավարությունը վճռական միջոցներ ե ձեռք առնում կուլտուրային այգիների քանակությունը շատացնելու համար. բայց դրա հետ միասին նա ուշադրություն ե դարձնում ամբողջ ԽՍՀՄ-ի տարածության մեջ վայրիաճների պտուղներ մթերելը զարգացնելու և խրախուսելու վրա, սկսած ամենածայր հյուսիսից, վորտեղ հասնում են միայն այնպիսի հատապտուղներ, ինչպիսիքն են՝ ճախնային մոշը, հապալասին, մինչև հարավային սահմանները, նրանց մերձարևադարձային պտուղների հետ միասին:

III. Վայրիան պտուղների հումուլբային բազան Անդրկովկասում

Բարենպաստ տարիներում վայրիաճ պտուղների ընդհանուր քերքը մոտավորապես վորոշվում է 200 հազար տոնն, դրան պետք ե ավելացնել մի քանի հարյուր հազար տոնն վայրի կաղիններ և հաճարենու կաղիններ, վորոնք շնորհիվ նրանց հատուկ նշանակության՝ հաշվի յեն առնվում առանձին:

Նույնիսկ միջին քերքավության տարիներում վայրիաճների պտուղների արտադրանքը 112 հազար տոննից ցածր չերայդ թվում Վրաստանում 61 հազար, Աղբքաջանում 32 հազար և Հայաստանում 19 հազար տոնն:

Անդրկովկասում հիմնական տեսակների միջին քերքը բաժանվում ե ըստ հանրապետությունների հետեւյալ կերպ.

Տեսակները	ԱՄՁԽՀ հազար տոնն	Դրանց թվում բայ հանրա- պետուրյունների %		
		Ազբեջան	Հայաս- տան	Վրաս- տան
Շագանակ	20,4	0,5	—	99,5
Տանձ	16,4	16,1	35,8	48,1
Խնձոր	13,0	25,0	24,0	51,0
Հոն	11,0	31,5	31,9	36,6
Զկեռ	8,9	68,5	12,1	19,4
Մուզ	7,8	39,6	11,8	48,6
Ալուչա	7,7	43,0	14,8	42,5
Ցուպտկի	7,5	69,4	14,8	15,8
Դափնակեռաս	3,5	—	—	100,0
Հունական կաղին	3,0	17,7	37,2	45,1
Խուրմա	2,2	59,0	—	41,0
Թթվիլ	1,9	17,8	12,4	69,8
Նուռ	1,6	95,0	—	5,0
Պաղի այլ տեսակներ	6,8	25,0	5,0	70,0
Ընդամենը	111,7	29,2	16,6	54,2
Հաճարի	929,7	21,8	7,6	70,6
Կաղնի	334,2	61,1	17,6	17,3
Ընդհանուրը տոնն	1375,6	32,7	10,8	56,5

Շ ա գ ա ն ա կ ն ե ր ը

Արտադրանքի քանակությամբ առաջին տեղը բռնում է անտառային շագանակը, վոր ծառի ձևով բավականին զգալի մեծությամբ աճում է Անդրկովկասում։ Շագանակ շատ կա Արխագիրայում և Արևմտյան Վրաստանում, ավելի քիչ՝ Աջարստանում, Կախիթում և Ադրբեջանի հյուսիս-արեմտյան շրջաններում (Բելօքան, Զաքաթալա, Կախի, Վարդաշեն, Կուտկաշեն)։

Շագանակի պտուղները շատ սննդարար են և Արևմտյան Յելշալայում ու Ամերիկայում նրանց պահանջը մեծ է, նույնպես և Անդրկովկասում։

Հասնելու շրջանում (հոկտեմբեր-նոյեմբեր) ամիսները խորոված, յեփած և բոված ձևով՝ տաք դրությամբ շագանակը

ծախվում ե Վրաստանի և Աղբյուջանի մի քանի քաղաքների փողոցներում:

Իտալիան, Ֆրանսիան և Տաճկաստանը մեծ քանակությամբ արտահանում են դեպի Գերմանիա, Անգլիա և Ամերիկա:

Առայժմ սննդի արդյունաբերությունը քիչ և ոգտագործում շագանակը և նրա հիմնական մասը ($70-80\%$) փչանում և անտառում:

Ա.Ս.Ֆիլէ-ում անտառային շագանակի միջին բերքը վորոշվում ե 20 հազար տոնն, բացի դրանից, այգիներում բուսնող շագանակը տալիս է մինչև 2500 տոնն:

Հավաքելու ժամանակ շագանակը շատ արագ փչանում է, դրա համար ել պահանջվում է զգույշ պահպանություն—սառը, լավ ողափոխման յենթակա շենքերում:

Արդյունաբերության համար մթերելիս, անհրաժեշտ է այն չորացնել, թեզուզ հասարակ ձեռի կուստար չորանցներում (լավացրած ծխարաններում):

Տանձն իր ընդհանուր բերքով բոնում ե շագանակից հետո յերկրորդ տեղը և բերքաբեր տարին տալիս ե 30 հազար տոննից ավելի: Տատ շրջաններում վայրի առաջնական տանձի բերքը մասնակի հավաքվում է տեղական բնակչության կողմից տանը գործածելու համար ($15-30\%$), իսկ մնացած մասը սովորաբար փչանում և անտառում:

Արդյունաբերական նպատակով տաճի մթերությունը զարգացել են 1933-4 թվից: Տանձի հիմնական քանակությունը արդյունաբերական վերֆշակման մեջ յենթարկվում է չորացման, իսկ փոքր մասը գնում է պավիլոն, պտղախմոր, պաստերներ, դրշար, քացախ, կվաս պատրաստելու, առանձնապես լավ և տանձը չոր կամպոտ պատրաստելու համար:

Տանձը տարածված է Անդրկովկասի բոլոր անտառային հոծություններում: Առանձնապես Հայաստանում—Ալլահվերդում, Զանգեզուրի, Իջևանի հոծություններում և Աղբյուջանում (Ղուբա, Ղարաբաղ), Վրաստանում տարածված է համարյա թե ամեն տեղ՝ տերևավոր անտառներում խառը դրությամբ:

Տանձի բոնած ընդհանուր տարածությունն Ա.Ս.Ֆիլէ ճիշտ կերպով հաշվի չի առնված, սակայն նա անպայման կազմում է մի քանի հազար հեկտար: Քիչ տանձենիներ պարունակող անտառների տարածությունը կազմում է մի քանի տասնյակ հազար հեկտար:

Խ Ա Ն Ր Ա Ե Ր

Անտառային խնձորներն աչքի յեն ընկնում մեծ թթվությամբ, գրա համար ել ամենից առաջ կարող են ոգտագործիլ սննդի արդյունաբերության մեջ խնձորի թթվուտ ստանալու համար:

Խնձորը հանդիսանում և նույնպես լավ կիսաֆարբիկատ պեկտինի արտագրության և հրուշագործական արդյունաբերության համար (խմոր, պավիլոն, միջուկներ և հյութեր), Բացի դրանից, անտառային խնձորները մեծ քանակությամբ գնում են թեյի արդյունաբերության համար, Առատ բերքատվության ժամանակ Անդրկովկասում նրա ընդհանուր արտադրանքը լինում ե 25 հազար տոննից ավելի: Տեղական բնակչությունը գործածության համար այդ խնձորները համարյա թե բոլորովին չի հավաքում:

Սննդի արդյունաբերությունն այժմե միայն սկսում գարգացնել անտառային խնձորի մթերուամը:

Անդրկովկասում հիմնական հոծություններն են Աղբբեջանում՝ Ղուրայի, Կուտկաշենի, Ղարաբաղի շրջաններում. Հայաստանում՝ Ալահալերդու և Զանգեզուրինը: Բացի դրանից խնձոր պատահում և Արևելյան Վրաստանի բոլոր տերևալիր անտառներում՝ խառը դրությամբ, ճանապարհներին մոտ և զաշտերում:

Հոն: Անտառներում խոշոր թփուտների ձեռվ բուսնող հոնը շատ գնահատելի պտուղ ե տալիս սննդի արդյունաբերության մեջ ոգտագործելու համար, բայց մինչև որս նրա բերքի տուկոսի չնշին քանակությունն ե յուրացվում, վորը լավ տարիներում հասնում ե Անդրկովկասում 15 հազար տոննից ավելի:

Հոնը կարելի յե ոգտագործել վիտամիններ պարունակող մի շարք մթերքներ ստանալու համար (հյութեր, կոնցենտրատներ, պաստերներ, լավաշ, պավիլոն և այլն):

Հոնը գործածվում ե նույնպես թարմ դրությամբ: Տեղական բնակչությունը նրանից մեծ քանակությամբ չորացնում ե:

Հոնը Միության հյուսիսային շրջաններում կարող ե անսահման սպառման պահանջ գտնել, վարովհետև հոնը աչքի յե ընկնում հականդախտային բարձր հատկությամբ:

Անդրկովկասում հոնի լայնատարած թավուտներ կան Ղարաբլիսայի, Իջևանի, Բորչալուի, Թիֆլիսի, Կախեթի, Թոուլշելենուրի և Ղարաբաղի անտառային հոծություններում:

Զիեռը հանդիսանում ե լավ հումորիթ պտղախմոր, պավիդլո, միջուկ և մարմելադներ պատրաստելու համար, նույնպես և կարող ե ոգտագործվել թթու զնելու համար:

Զկնոն առատությամբ բումում ե վորպես մեծ թփեր Ադրբեջանի բոլոր անտառային շրջաններում. նրանից շատ կա կախեթում, և մի քիչ պակաս Արևմտյան Վրաստանում: Զկնոի ընդհանուր բերքն Ա.ՍՖԽՀ-ում բերքաբեր տարիներում հասնում ե 12,000 տոննից ավելի:

Հրամակ. պատահում ե մի քանի տեսակներով և բումում և խոշոր թփերի ձևով կամ վորպես ծառ մինչև 5 մետր բարձրությամբ:

Սև պտղի հրշակը խոշոր պտուղներով տալիս և արդյունաբերական հումուրյթ-պտղախմոր, պայիզլո պատրաստելու համար, նույնպես թեյի ու սուրճի արտադրության համար:

Սև հրշակը մանր պտուղներով կարող ե ոգտագործվել միայն սուրճ-թեյի արդյունաբերության համար:

Կարմրապտուկ հրշակը զժվար թե ընդհանրապես կարելի լինի ոգտագործել սննդի արդյունաբերության մեջ, շնորհիլ նրա քանակության սահմանափակության և խիստ փշոտ լինելու հետևանքով՝ զժվար հավաքելուն:

Հաճախ հրշակ պատահում ե անտառի կտրված մասերում, բացատներում և առանձնապես թփային (կրկնակի) թափուտներում:

Լավ տարին նրա բերքն ամբողջ Անդրկովկասում հասնում է 12 հազար տոննի:

Ալուչա. փշոտ թփեր են, տարածված անտառների միջին և ներքեւ շերտերի բացատներում, ալյուրե, պավիդլո, միջուկներ պատրաստելու համար իրենից հիանալի նյութ ե ներկայացնում:

Ալուչայից մեծ քանակությամբ պատրաստում են «թթու պաստեր» (լավաշ), այսինքն ողում չորացրած ալուչայի յեփած հյութ:

Պաստերն իր մեջ պարունակում ե մինչև 13% թթվություն և մինչև 30% շաքար. պաստերի մեջ ամենազնահատելին վիտամինների մեծ քանակությունն եւ Ալուչայի պաստերը անսահման սպառումն կարող ե ունենալ Միության կենտրոնական, հյուսիսային և արևելյան շրջաններում. Անդրկովկասում շատ հայտնի յե բնակչության մեջ այսպես կոչված «կվացարիխին» — ալուչայի յեփած հյութը. Անդրկովկասում ալուչայի հոծություն-

ների աճման հայտնի կենտրոններն են՝ Զանգեղուրը, Կուտկաշենը, Խաչմասը, Արխազիան, Աջարիստանը, Արևմտյան Վրաստանը, Լավ տարիներում ալուչայի բերքը հասնում ե 13 հազար տոննից ավելի:

Դափնակեռաս. Սովորաբար Արևմտյան Վրաստանում տարածված թուփ ե. անտառներում առաջացնում ե համատարած, դժվար անցնելի մանրածառ կիցանտառիկներ:

Դափնակեռասի պտուղները կարող են ոգտագործվել խմիչքներ, զինի և մուրաբու պատրաստելու համար: Տեղական բնակչությունը գործածում ե այն թարմ գրությամբ, նույնպես և լայն կերպով ողտագործում են այն զովացուցիչ խմիչքներ պատրաստելու համար:

Դափնակեռասի տերեներից արտասահմանում ստանում են դափնակեռասնյան յուղ:

Դափնակեռասի հումույթային բազան Արևմտյան Վրաստանում, Աջարիստանում և Արխազիայում հակայական ե—հասնում ե մի քանի տասնյակ հազար հեկտարի: Անդրկովկասում գափնակեռասը չի հետազոտված վոչ նրա բերքատվության և վոչ ել քերակա-տեխնոլոգիական հատկություններով:

Հունական կակալ. Անդրկովկասի անտառներում շատ տարածված ծառ ե: Այն բուսնում ե կամ վորպես մենակ ծառ կամ թե անտառների միջին և ներքին զոնաներում վոչ մեծ խմբերով, շատ հաճախ պատահում ե նաև ճանապարհների յերկարությամբ, արխերի ափերին և հին բնակչության վայրերում,

Ա.Ս.Ֆ. մի շարք հոծություններում գոյություն ունեն վոչ շատ մեծ կակալի հողամասեր—(Լենքորանի, Կախեթի և Իջևանի գրջանում):

Կակալի միջուկը շատ սննդարար ե և պարունակում ե իր մեջ մինչև 50—60% յուղային մասեր, 8—16% աղոտային նյութեր, մինչև 1% ֆոսֆորային թթվույթ, և մինչև 1% կալիա: Կակալի հավաքն սկսվում ե սեպտեմբերի յերկրորդ կիսից և վերջանում ե հոկտեմբերի վերջին:

Կակալը մեծ քանակությամբ գործ ե ածվում թարմ գրությամբ: Մասամբ ողտատործում են կակալը հիանալի յուղ ստանալու համար: Անդրկովկասում չհասած կակալներից պատրաստում են մուրաբա:

Զնայած մողովդակական տնտեսության մեջ ունեցած կակալի պտուղների խոշոր նշանակությանը, նրա ծառերն Անդրկովկասում, շնորհիվ ֆանկարժեք փայտի, ուժեղ կերպով կտրում են:

Նրա քանակությունը սիստեմատիկորեն տարեցտարի պահապում եւ Հին կարգերի, վերջին 50 տարվա ընթացքում կտըրված ե մոտավորապես 1 միլիոն խորանարդ մետր կակալի ծառեր:

Անտառի բիոլի (մանր կաղին), Զնայած վոր շատ լայն կերպով տարածված ե մանր կաղինը, բայց տնտեսական նշանակություն չունի, շնորհիվ հաղվաղեղ և թույլ բներքատվության:

Խուրմա. Բարձր ծառ ե, վորն աճում է անտառների ներքին շերտերում: Խուրման բաղականին տարածություն և ըլունում Լենքորանի անտառներում (մոտ 1000 հեկտար), տարածված ե նաև Արեմտյան Վրաստանում, բայց այնտեղ չի առաջացնում մաքուր տնկարաններ, այլ ցրված մեծ տարածության վրա—հեկտարում քիչ քանակությամբ ծառերով: Հանդիպում են նաև կախեթի և Զաքաթալի շրջաններում:

Բնակչությունը գործ ե աճում նրա պտուղները թարմ և չորացած դրությամբ և նրանից պատրաստում են «զոշաբ»—խուրմի յեփած հյութը:

Մննդի արդյունաբերությունը կարող է ոգտագործել խուրման պտղախմոր պատրաստելու համար, վորն հանդիսանում է բարձր վորակ ունեցող նյութ հրուշագործական արտադրության համար:

Խուր. Մերձ արևադաշտյան թուփ ե, վոր արդյունաբերության համար տալիս է իր թթվությամբ արժեքավոր պտուղներ:

Նուռի հյութը սննդի արդյունաբերության մեջ թանկ է գնահատվում և նրա վերաբերմամբ անսահման պահանջ կա: Թարմ հյութն աչքի յե ընկնում շատ հարուստ վիտամիններ պարունակելով:

Արդյունաբերական նշանակություն ունեցող նուռ թավուդները գտնվում են Լենքորանի, Սամուխի և Գյոզչայ-Աղդաշի հոծություններում:

Մոօք ներկայացնում է իրենից թանգարժեք հումույթ հրուշագործական և անալիոնու արդյունաբերության համար: Մոջի պաստերիզացիայի յենթարկած հյութը մոտիկ ապադայում անպայման կունենա մասսայական պահանջ:

Անդրկովկասում տարածված ե մոշն առատությամբ և ամեն տեղ: Լավ բերքատվության դեպքում Անդրկովկասում մոշը տալիս է 15000 տոննից ավելի պտուղ, Մոջը բուսնում է բարձր փշոտ թփուկների ձևով անտառների բացատներում, ճանապարհ-

ների, պարիսպների և արխերի յերկարությամբ բավականին մեծ քանակությամբ:

Կովկասյան չերնիկան, տարածված և գլխավորապես Արևմըտյան Անդրկովկասում մի քանի հազար հեկտար տարածության վրայ Դա մինչև 1½ մետր բարձրություն ունեցող թռվի և, վոր պատահում և հաճարի և յեղեինի անտառների միջին շերտերում մանրածառ անտառի ձևով:

Պտուղները ստամոքսը ամբացնելու հատկություն ունեն, տերեններն ոգտագործում են չերնիկյան թեյ պատրաստելու համար, վորը «ըրբուսնիկական թեյ» անունն է կրում:

Վայրիաճ պտղատու թփուկներից, վոր մասսայական տարածված են, պետք և շեշտել նույնպիս ծորենին և սպարակը (բարբարիս և սումախ), վորպես սննդի արդյունաբերության համար բարձր թթվություն ունեցող պտուղ տվողներ. այն ունի և տելական գործածություն վորպես համեմունք մսով կերակուրների:

Անդրկովկասում վայրիաճ պտուղների մթերման վրա հարկավոր ուշաղը թյալություն չեր գարձվում, վորը հաստատվում և նըրանց մթերման քանակությամբ: 1931 թվին մթերված և 516, 1932—647, 1933—4254 տոնն: Այդպիսով, 1933 թվին բեկումն առաջացավ, իսկ 1934 թվին Անդրկովկասում մթերվել և 15,278 տոնն:

Հաշվի առնելով բանվորական ուժի պահանջը, անտառների մատչելիությունը, ճանապարհների դրությունը, յերկաթուղու կայաբանների մոտիկությունը և այլն, վայրիաճ պտուղների հավաքի հնարավորություններն Անդրկովկասում մոտակա 2—3 տարիներում կարող և արտահայտվել լավ բերքատվության դեպքում մինչև 67 հազար տոննով, իսկ միջակ բերքատվության դեպքում մինչև 29 հազար տոնն: Դրա թվում՝ Վրաստանում 13 հազար տոնն, Աղբքաջանում 10 հազար տոնն, իսկ Հայաստանում 6 հազար տոնն:

Ներկայում մթերման մեջ ընդգրկած են միայն տանձը, խնձորը և ալուչան, մյուս տեսակները, վորպես մթերման համար ավելի բարդ տեխնիկա պահանջողներ (որինակ՝ շագանակը, հոնը, ծորակը և մյուսները) կամ, վորպես մթերողների կողմից դեռև և անրավարար դնահատվածներ (որինակ՝ հրշակը, խուրման, զկեռը, մոշը և մյուսները), ընդհանուր մթերման մեջ չնշին մասն են կաղմում:

Վայրիան պտուղների մթերման մեջ մեծ արգելակ և հանդիսանում այն, վոր տեղական բնակչությունը չգիտի տեխնիկորեն կատարել պտուղների հավաքը, չգիտե հավաքած արտադրանքը պահել:

Շատ հաճախ հավաքման ժամանակ թափ են տալիս բոլորովին չհասած պտուղները, վորոնք ծառը թեթև շարժելուց չեն ընկնում, այն ժամանակ պտուղները պոկում են ճյուղերի հետ միասին: Նման հավաքի ժամանակ կործանում են հետեւյալ տարվա ըերքը:

Մասից թափ տված պտուղները չեն ջոկջկում ըստ հասունության աստիճանի և սովորաբար մեկ պարկի, կթողի կամ մի այլ տարայի մեջ ընկնում են շատ հասած և բոլորովին խակ պատուղներ և շատ հաճախ լցված այդ գրությամբ մնում են մի քանի որ: Բնական ե, վոր նման պայմաններում մթերման կետերն են հաճախ հասնում կիսարդկած տձեւ մի շաղախ: Նման գեղքերում առանձնապես վնասակար և պարկային տարան:

Տարածված ե և նույնպես ուրիշ գեպք. հավաքած (խոնավ, չորացրած) պտուղները հաստ շերտով դարսում են կամ կույտերով լցնում, հետևանքը զբա այն և լինում, վոր բոլորովին փշանում են կամ մասնակի գցում արտադրանքի արժեքը: Նման յերևույթները հետևանք են անգրագետ մթերումների: Աշխատում են ըստ նարավորի տիրել մոտակա հարուստ հողամասերի պտուղների և հատապտուղների ըերքը և մի քանի որվա ընթացքում ծանրաբեննել նրանցով մթերման կետերը, վորոնք ստիպված են ժամանակավորապես դադարեցնել պտուղներ ընդունելը չկարողանալով նրանց վերամշակել: Հավաքած պտուղների մի մասը թափվում են գյուղացիների բակերում, մի մասը մնում անտառում յերեմնն բավականին յերկար ժամանակ, սպասելով մթերման կետերի ընդունելությանը:

Զորացրած, կույտերով ընկած պտուղները սովորաբար մըղլրում են և փշանում:

Այն ինչ, յեթե պտուղները փռեն վոչ հաստ շերտերով աբեղվի տակ և կամ թե ողափոխվող շենքերում (թեկուղ ծածկոցների տակ), կանոնավոր կերպով տակ ու վրա անելու դեպքում, նրանք շուտով գոլորշիացնում են իրենց միջի խոնավության ավելցուկը և բավարար դրությամբ մնում մինչև ընդունող կետին հանձնելը:

Վայրիան պտուղները հավաքելու լավագույն կազմակերպած մոտեցումը հանդիսանում է բրիգադային մեթոդով հավաքը:

Այդ գեղքում հնարավոր և առաջուց պլանային կարգով կցել յուրաքանչյուր անտառային հողամասի վորոշ բրիգադի, դրա հետ միասին հնարավոր և բրիգադի յուրաքանչյուր անդամին հավաքի ժամանակի ընթացքում, (հնգորյակը մեկ անգամ) տալ առաջադրություն:

Այդ գեղքում յուրաքանչյուր բրիգադ կամաց-կամաց կտամթերող կետին վորոշված ժամկետին վորոշ նորմա: Իսկ այդ հնարավորություն կտամթերման կետին աստիճանարար պատրաստվել ընդունելու արտադրանքի ամբողջ քանակությունը: Առանձնապես կարեոր և այն, վոր յուրաքանչյուր բրիգադ կարողանահաշվի առնել թե արտադրանքի վեր մասը կարող և ուղղակի հանձնել մթերման կետին և վեր մասը անհրաժեշտ և չորացնել և պահել վորոշ ժամանակ (2—3 շաբաթ), մինչեւ կետին հանձնելու:

Բացի զրանից, նման ձեռվ հավաքը կազմակերպելու գեղքում հնարավոր և լայն կերպով զարգացնել սոցմրցումը, ինչպես առանձին բրիգադների մեջ, նույնակես և անհատապես—հավաքած արտադրանքի վորակը բարձրացնելու, կորուստը պակասեցնելու և հավաքածի քանակությունը շատացնելու համար:

Բրիգադի բարձրացները լավ պիտի տեղյակ մինեն պտուղներ հավաքելու տեխնիկայի, նրանց պահելու, տեղափոխելու հետ՝ կախված տեղական պայմանների առանձնահատկությունների և պտուղների տեսակների հետ:

Անցնելով հետագա տարիների մթերման հեռանկարներին, մթերողների առաջին հերթի ինդիբը պետք և դնել, վոր սկսեն յուրացնել բացի տանձից, խնձորից և ալուչայից, այլև շագանակը, զկեռը, հրշակը, մոշը, խուրման, նուռը, հոնը, կաղինը, դափնակներաց, հաճաները և այլն:

Դրա հետ սիստին շագանակի մթերումը պետք և բարձրացնել և հասցնել տանձի և խնձորի մթերումների մակարդակին, ալուչայի, հոնի և զկեռի մթերումները պետք և կազմեն ընդհանուր մթերումների մինչև $10^{\circ}/_0$, իսկ հրշակի, մոշի, նուռի և խուրմայինը՝ մինչև $5^{\circ}/_0$, իսկ հրշակի, մոշի, նուռի և խուրմայինը՝ մինչև $5^{\circ}/_0$ յուրաքանչյուրինը:

Այդ տեսակների մթերումը բարձրացնելով հնարավոր և ավելացնել Անդրկովկասում վայրիաճ պտուղների ապրանքային արտադրանքը մինչև $60—70$ հազար տոննի բերքատվությամբ հաջող տարիներում:

Գործնական տեսակետից կարեոր և, վոր վերևը շոշափած հարցերը ուսումնասիրվեն Անդրէովէասի առանձին հանրապետություններում:

IV. ԱԽՍՖՀ-ի հումուլյային բազան.

Ադրբեջանի վայրիան պատուղների բերքը լավ տարիներում (առանց աճառների և հաճարի կաղինի) մոտավորապես հաշվում է 55 հազար տոնն, իսկ միջակ բերքի ժամանակ 32 հազար տոնն: Համաձայն դրա հասրավոր ապրանքային արտադրանքը համուս է 24,0 հազար տոննի և 10,2 հազար տոննի:

Հետեւյալ տախտակը հասկացողություն և տալիս առանձին տեսակների արտադրանքի մասին և ցուցմունքներ նրանց առածման վերաբեյալ:

Ադրբեջանի ընդհանուր արտադրանքը ըստ տեսակների միջին բերքատվության գեղագում:

ՏԵՍԱԿՆԵՐԸ	ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՀԱԶԱՐ ՄՈՒՆԴՈՒ	ՏԵՍԱԿԱ- ԲԱՐ ԿԵՐՊ %/ %-%	ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈՇՈ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՐԱՋՎԱԾ ՀՆ
1. Զերո . . .	6,1	18,7	Հենքորան, Խաչմաս, Ղարաբաղ.
2. Հըշակ . . .	5,2	16,1	Ամեն տեղ, առանձնապես Լենքո- րան, Խաչմաս.
3. Հոն . . .	3,5	10,7	Տոռող, Յելենդորֆ և Ղարաբաղ.
4. Ալուչա . . .	3,5	10,2	Ամեն տեղ, առանձնապես Խաչ- մաս և Կուտկաշեն.
5. Խնձորենի . .	3,2	10,0	Ամեն տեղ, առանձնապես Ղուլաս, Ղարաբաղ և Կուտկաշեն.
6. Մող . . .	3,1	9,5	Ամեն տեղ.
7. Տանձ . . .	2,6	8,1	Ղարաբաղ, Տոռող-Յելենդորֆ և Ղուլաս.
8. Նռնենի . . .	1,5	4,8	Լենքորան, Յելենդորֆ, Սամուխ, Կուտկաշեն.
9. Խուզմա . . .	1,3	4,1	Լենքորան.
10. Հուն. կաղին.	0,5	1,7	Ամեն տեղ, առանձնապես Լենքո- րան, Զաքաթալա.
11. Այլ տեսակն.	2,1	6,1	Ամեն տեղ.
ԸՆԴԱՄԵՆԸ . . .	32,4	100,0	

Հոծություններն ընտրված են պայմանականորեն, մեծ ժամանքը անտառատնտեսությունների սահմանագծերով, կամ անտառային դաշտաներով, ըստ վորուց ընդգրկում են հետեւյալ շրջանները:

Զաքաթալայի հոծություն—Բելոքանի, Զաքաթարայի և Կալիսի շրջանները. Կուտէաշէնի հոծություն—Նուխու, Վարդաշէնի, Կուտէկաշէնի, Գյողչայի, Աղպաշի շրջանները. Դուբայի հոծություն—Դուբայի և Դուսարի շրջանները. Խաչմասի հոծություն—Խաչմասի և Դիվիչի շրջանները. Յեկենդորփի հոծություն—Թոռուզի, Գևտարեկի, Շամախու, Յելնազորփի, Նարիմանովի և Սամուխի շրջանները. Ղարաբաղի հոծություն—Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջանները. Քըլմատանի հոծություն—Զանգելանի, Լաշինի շրջանները. Լենքորանի հոծություն—Մասսալինի, Լենքորանի, Ասաւրայի շրջանները:

Աղբեջանի վայրիան պտուղների յուրացման վերաբերյալ
նիմնական խնդիրները.

1) Ինկատէ ունենալով զկեռի, հրշակի և խուրմայի հումուցայի բայց բազայի ուժեղությունը, վորը կազմում և Աղբեջանի վայրիան պտուղների ընդհանում արտադրանքի մինչև 40% , անհրաժեշտ և առավելագույն չափով զարգացնել այդ պտուղների և հատապտուղների միջերումները վորպես մննդի արդյունաբերության համար բարձրորակ հումույթներ:

2) Ինկատի ունենալով հոնի, ալուչայի և նուան նշանակալից հումուցային բազան, անհրաժեշտ և սկսել արդյունաբերական հավաք հոնի և ուժեղացնել ալուչայի ու նուան միջերումները, վորպես արժեքավոր հումույթ բարձրաստիճան վիտամինային դիետիկ արտադրանք պատրաստելու—հյութերի, պաստեղների և այլ բաների համար:

3) Պետք ե շարունակել տանձի և խնձորի միջերման քանակությունը բարձրացնելը:

4) Անտառային պտղային հոծությունները կուլտուրական ձեռվ յուրացնելու նպատակով, անհրաժեշտ և ավելի արժեքավոր հողամասերում ձեռնարկել անտառապտղային տնտեսություններ կազմակերպելուն, վորը հնարավորություն կտա ամենակարճ ժամանակում ավելացնելու արտադրանքի քանակությունը 5—10

անդամ, Անտառապողային տնտեսություններ կազմակերպելու առաջնակարգ հողամասերն են.

ա) Լենքորանի—նոնենու, խուրմի և հրշակա-զկեռի հոծությունները;

բ) Կուտկաշենի հոծություն—խնձորենու և շաղանակենու հողամասերը:

գ) Ղուրայի—խնձորենի, տանձենի:

դ) Լեռնային Ղարաբաղ—տանձենի, խնձորենի, հոնի:

ե) Սամուխի—նոնենու.

V. Հայաստանի վայրիան պտուղների հումույթային բազան

Հայաստանում վայրիան պտուղների ընդհանուր արտադրանքը լրիվ բերքատվության դեպքում վորոշվում է՝ 34000 տոնն (առանց աճառների և հաճարի կաղնու), իսկ միջակ բերքի դեպքում 18,600 տոնն: Դրան համապատասխան ապրանքային արտադրանքը 12,500 և 6,600 տոնն:

Հանրապետության մեջ ամբողջ բերքը ըստ պտղատեսակների բաժանվում է հետևյալ կերպ. (միջին բերքի դեպքում):

Տակտակ № 3

ՊՏՂԱՏԵՍԱԿԸ	ՀՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԳՐԱՆՔԸ ՀԱՂԱԲ ՄՊՆՆ.	ՏԻՄԱԿԱՐԱՐ ԿՋԻՆԸ %	ՏՎՅԱԼ ՄԵԽԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈ- ՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԱԺՎԱՆ Են
Տանձ	5,9	31,5	Ղարաքիլիսա, Զանգեզուր, Իջևան-
Հոն	3,5	18,8	Ղարաքիլիսա, Զանգեզուր, Իջե- կան, Շամշադին.
Խնձորենի . . .	3,2	16,7	Ղարաքիլիսա, Զանդեղուր.
Աղուչա	1,1	6,0	Զանգեզուր.
Հոռ. կաղին . .	1,1	6,0	Ամեն տեղ.
Զկեռ	1,1	6,0	Զանգեզուր, Շամշադին.
Մող	0,9	5,0	Զանգեզուր.
Մն. տիմակները .	1,8	10,0	Ամեն տեղ.
ՀՆԴԱՄԵՆԸ . . .	18,6	100,0	

Հոծություններն իրենց մեջ ընդրկում են հետեւյալ շրջանները:

Դարաքիլիսայի (Կիրովական) հոծություն—Ալլահվերդու, Դարաքիլիսի, Ստեփանավանի շրջանները. Իջևանի հոծություն—Իջևանի շրջանը և Դիլիջանի շրջանի հյուսիսային մասը. Դիլիջանի հոծություն—Դիլիջանի շրջանը. Շամշադինի հոծություն—Շամշադինի շրջանը. Զանգեզուրի հոծություն—Ղափանի և Գեղյուսի շրջանները:

Հայաստանում վայրիաճ պտուղները յուրացնելու վերաբերյալ հիմնական խնդիրները.

1) Անհրաժեշտ և Զանգեզուրում ալուչայի, իսկ Դարաքիլիսայի, Իջևանի և Շամշադինի հոծություններում—հոնի մթերումների ավելացումը,

2. Ուժեղացնել տանձի և խնձորի մթերումները Դարաքիլիսի, Զանգեզուրի և Շամշադինի հոծություններում:

3. Դարաքիլիսայի հոծության մեջ ստեղծել անտառապըտուցին տնտեսություն հոնի, տանձի և խնձորի, իսկ Իջևանում—տանձի:

VI. Վրաստանի հումույթային բազան.

Վրաստանում վայրիաճ պտուղների ընդհանուր արտադրանքը լրիվ բերքի ժամանակ մոտավորապես զորոշվում է 105000 (առանց աճառների և հաճարի կաղնու), միջին բերքի դեպքում 60000 տոնն:

Դրա համեմատությամբ ել ապրանքային հնարավոր արտադրանքը 31,000 և 13400 տոնն:

Հնդհանուր արտադրանքի բաժանումն ըստ տեսակների նախատեսնված ե հետեւյալ տախտակում:

(Մ ի ջ ի ն ը ե ր ք ի դ ե պ ո ւ մ)

Տախտակ № 4.

ՏԵՍԱԿՆԵՐԸ	Արտադրան-քը հազար առնոով	Տեսակարար կշիռը 0/0% ո-ով	Տվյալ տեսակի հիմնական հոծությունները տարածված են.
Շագանակ . . .	20,3	33,5	Արխաղիա, Խնդորական հոծություննում, Աջարիստան, Մարտիրոսն հոծ. մնացած հոծությունները Արևմտյան Վրաստանում և Դաբեթիաում:
Տանձ	7,9	13,0	Բորչիլուի, Թիֆլիսի, Բորժոմ-Ախալցխայի, Աջարիստան, Արխաղիա, Գոբր քանակությամբ ամեն տեղ:
Խնձորենի . . .	6,6	10,9	Ամեն տեղ:
Հոն	4,0	6,6	Թիֆլիսի, Կախեթիայի, Բորչիլուի:
Մուշ	3,8	6,3	Ամեն տեղ:
Դափնակեռաս .	3,5	5,8	Չոխատառի, Բաղդադի, Ճիաքուրի, Աջարիստան, Արխաղիա:
Ալուչա	3,3	5,4	Ամեն տեղ, առանձնապես Ռզուրդեափ, և Արխաղիա, Չոխատառի, Աջարիստան:
Հոմակ. կաղին.	1,4	2,3	Ամեն տեղ, առանձնապես Կախեթիայի, Արխաղիայի:
Ֆլյի	1,3	2,2	Ամեն տեղ, առանձնապես Արևմտյան Վրաստան:
Խուրմա	0,9	1,6	Արևմտյան Վրաստանի:
Մա. տեսակները.	7,7	12,4	Արևմտյան Վրաստանի:
Հնդամենը . .	60,7	100,0	

Հոծություններն իրենց մեջ ընդգրկում են հետեւյալ շրջանները:

Կախեթիայի հոծություն—Թելավի, Կվարելիի, Լագողեխի, Գուրջանի, Թիֆլիսի, Դուշեթի, Մցխեթի, Երցութիոննետի, Գառի-Կախեթի, Աղբուլախ-Մանղլիսի. Թիֆլիսի շրջան—Բորչիալուի հոծություն—Լյուքսեմբուրգի, Բաշկիչեստի. Ախալցխա-Բորժոմի շրջան, Ախալցխայի հոծություն—Աղբգենի, Տոլոշի, Բորժոմի շրջաններ, Խնդորայի հոծություն—Զուգիդիլի, Զխորոց, Դալբենջիլի շրջան, Խորի, Փոթիի, Նոր-Սենակի շրջան. Ողուրդետի հո-

ծություն—Ողուրդետի, Լանչխուտի շրջան. Չոխաթառըի հոծություն— (նույն շրջանը). Մարտվիլի հոծություն—Խոնի, Մարտվիլի շրջան. Ցագերի հոծություն— (նույն շրջանը). Սվանեթի հոծություն. Քութայիսի հոծություն—Քութայիսի, Ոքրիրի շրջան. Հարավ-Ռսեթիայի հոծություն— (ամբողջ Հարավ-Ռսեթիան). Անջարիստանի հոծություն— (ամբողջ Անջարիստանը). Արխազիայի հոծություն— (ամբողջ Արխազիան):

Վրաստանում վայրիաճ պտուղները յուրացնելու վերաբերյալ զլիսավոր խնդիրներն իրազործելու կարգով անհրաժեշտ ե անցկացնել հետեւյալ միջոցառումները:

1) Լայնացնել շագանակի մթերումը, վորովես Վրաստանի վայրիաճ պտղային հիմնական հումույթ (ամբողջ բազայից 33%):

2) Զարգացնել հոնի մթերումը Արևելյան Վրաստանում, աւլուչայինը, դափնակեռասինը, չերնիկայինը, և խուրմայինը՝ Արևելյան Վրաստանում, մոշը—ամեն տեղ:

3) Ուժիղացնել ամեն տեղ տանձի և խնձորի մթերումները,

4) Կազմակերպել անտառապտղային տնտեսություններ.

ա) Վրաստանում—Մուխուրայի և Պախուլանո-Ջվարայի անտառային դաշտաներում, իսկ Արխազիայում՝ Կողորում—շագանակի:

բ) Արևելյան Վրաստանում հոնի և տանձի:

VII. Վայրիանների Տեսակների պտղատրության առանձնահատկությունը.

Վերոհիշյալ աղյուսակները դիտելիս, պետք ե ի նկատի ունենալ, վոր վայրիաճ պտղային տեսակների առանձնահատկությունը հանդիսանում է նրանց բերքավության մեծ տատանումն առանձին տարիներում: Ըստ առանձին տեսակների՝ բերքատու տարին ընդհանուր արտադրանքը առանձին անտառային դաշտաներում, իսկ յերբեմն ել ըստ հոծությունների բարձրանում ե (բայց իհարկե վոչ հանրապետության մասշտաբով ամբողջովին վերցրած) 3—4, յերբեմն ել 5—6 անգամ, համեմատած միջին բերքաբեր տարիների արտադրանքի հետ:

Որինակի համար բերվում ե մեկ արմատի բերքատարության համեմատական աղյուսակը Լենքորանի հոծության մեջ միջին և լավ բերքի դեպքում, ծառ-թփային բուսականության բավականաչափ խտության պայմաններում:

ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՄԱԿ պտղատար արմատի բերքը կիրագրամներու.		
	Միջին բերքի դեպքում.	Լավ բերքի դեպքում.	Բարձրացումը (կլորացրած)
Նուռ	2,2	6,6	3 անգամ
Աղուչա	0,5	3,1	6 >
Կաղնի (հաճարը)	1,3	8,6	6 >

Բնական-պատմական վոչ միանման պայմանների հետևանքով, միննույն տեսակների միջին և լավ բերքատվության մեջ յեղած ճեղքվածքը առանձին հոծությունների համար տարբեր է:

Ամբողջ հանրապետության մեջ և Անդրկովկասովմ լավ տարբիններում առանձին տեսակների արտադրանքը անցնում է միջին տարբինների արտադրանքից 2—3 անգամից վոչ ավել:

Վայրիաճ տեսակների բերքատվության այդպիսի տատանումը թելագրում ե, ամեն տարի առաջուց վորոշել ըստ հիմնական պտղային հոծությունների արտադրության համար պետքական տեսակների բերքի գրությունը Առանց դրան չի կարելի կանոնավոր և ճիշտ կերպով նախապատրաստվել բերքհավաքին, վերամշակմանը և բերքի տեղափոխությանը տվյալ տարում:

VIII. Վայրիաճ պտղուղիների յեզ հարապտուղիների մթերումների նեռանկարները.

Անդրկովկասովմ հումույթային բազան իր հեռանկարում չի կարող մնալ այն դրությանը, վորի մեջ նա գտնվում ե այժմ:

Մի կողմից անտառային պտղի շատ տեսակներն ունեն գնահատելի փայտեղեն, (շագանակը, հունական կաղինը, տանձը, խուրման, հոնը, հրշակը և այլն), դրա համար ել այդ տեսակների բնները յերբեմն կտրում են բավական մեծ քանակությամբ; դրա հետ միասին շատ անսխտեմ, վորի հետևանքն այն ե լինում, վոր շարունակ քչանում են այդ տեսակները:

Մյուս կողմից Անդրկովկասում բանվորական ուժի հաշվեակիությունը տարեց-տարի գառնում և ավելի լարված (այն չափով, վորածախով ԱՍՖԽՀՄ հանդիսանում և զարգացող և մեծ աշխատանք պահանջող տեխնիկական կուլտուրաների շրջան), դրա համար ել պտղի արտադրանքի տեսակետից մի շարք անտառներ բանվորական ուժի ստեղծված դեֆիցիտի դեպքում դուրս են ընկնում շահագործումից վորպես տնտեսականորեն չարդարացնողներ:

Այդ յերկու դրությունը ստիպում է Անդրկովկասի անտառների առանձին մասերում անցնել պտղային արտադրանքի պլանային բացիկունակ շահագործմանը, դրա համար տնտեսապես ավելի հարմարներն ընտրելով:

Այդ անտառամասերը համապատասխան կազմակերպությունների կողմից պետք է հատուկ հսկողության տակ առնվեն և նըրանց վրայի անտառապատճեսական բոլոր միջոցառումներն ու առաջին ինամքը պետք է տարվեն առաջուց նկատի առնված պըտղատու ծառերի պտղատարությունը բարձրացնելու տեսակետով։ Պտղատարությունը շատացնելու ավելի հասարակ և եփփեկտավոր ձեւ կայանում են պլանային ձեռվ անցկացրած լույսն առատացնելու համար ծառերը կտրատելով անցքեր բացանելու միջոցառումների մեջ։

Այլ կերպ ասած, ընտրված անտառամասերում պետք է հիմնըրված լինեն անտառապտղային տնտեսություններ։ Հնարավոր ենույնպես անտառապտղային խորհունտեսություններ կազմակերպելը, վորին արդեն ձեռնարկել են Միջին Ասիայում։

Անտառապտղային տնտեսությունը հնարավորություն կտածառերի պտղատարությունը ավելացնել համարյա թե 5—10 անգամ, վորը հնարավորություն կտա այդ անտառամասերում անցկացնել հավաքը հեշտացնելու և նույնիսկ մեքենայացնելու համար մի շարք բացիկունալիզատորական միջոցառումներ, իսկ հետո յել պտուղների հավաքման տեղից վերամշակման կետերը տեղափոխելու վերաբերյալ իսկ այդ բոլորը հետևանքում թույլ կտաբանվորական ուժի քիչ գործածությամբ հավաքել ավելի շատ արտադրանք։

Անդրկովկասի անտառային հարստությունները շահագործելու վերաբերմաբ միջոցառումների եփփեկտիվությունը, այն բացինալ կերպով ոգտագործելու դեպքում կարող ե արտահայտվել հետևյալ վոչ բոլորովին ճշգրիտ, սակայն, իրականաւթյանը բաշկանին մոտիկ հաշիմսերով։

1. Վայրիաների պտղահատապտղային հումույթը մոտակա տարիներում Անդրկովկասի ժողովրդական անտեսության մեջ մտնելը կարելի յե հասցնել մինչև 60000 տոննի:

Այդ քանակությունից տեղում թարմ գրությամբ կարող են գործածվել մոտավորապես 8000 տոնն, և վերամշակման յինթարկվել 52000 տոնն, վորը կտա՝

մուրաբա	3000	տոնն
մրգի հյութեր	2500	»
պյուրե և պտղախմոր	1200	»
պաստերներ (մրգի լավաշ)	2500	»
չոր մրգեր	6000	»


2. Արտասահման արտահանելու համար կարող են ոգտագործվել մի քանի տեսակ պտուղներ (որինակ՝ շագանակը, խընձորը, տանձը, ալուչան, զլխավորապես փորպես սերմի նյութ) նույնպես և շագանակը, խուրման, հրշակը, հոնը կաղինները և այլ պտղատու ծառերը ցանցառացնելու համար կտրելուց ստացված թանգարժեք փայտը:


3. Հունական ընկույզի, կաղինի և հաճարի կաղինի վերամշակումը կարող է մեծ չափով տալ թանգարժեք բուսական կերպարային և տեխնիկական յուղեր:

4. Անտառապահյային խորհունտեսությունների կազմակերպումը, խողաբուծական և թոշնաբուծական ոժանդակ ճյուղերի հետ միասին, բացի անմիջական տնտեսական և քաղաքական հրակայական եֆֆեկտիվությանից, նրանց գտնված շրջանում կտուղացնեն նաև անտառային տնտեսությունների առողջացում:

Այդ բոլոր նկատառութմներով կարելի յե համարձակ համարելու վոր վճռականորեն վայրիած պտուկներն առավելագույն չափով ոգտագործելուն անցնելը: Իր ծախսերը լրիվ կերպով արդարացնելու և բոլոր անհրաժեշտ միջոցառութմների բարձր յեկամը-տայինության սկզբունքի հիման վրա, հնարավոր ե:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038314

(154)

906

A II
38314

5

787

Уполномочаг СНК СССР в ЗСФСР

Дикорастущие плоды
ЗСФСР

ИЗДАНИЕ ЗАКАВКАЗСКОГО КОНВЕНЦИОННОГО БЮРО

Тифланс—1935 г.